ոչ թէ խեղանդամ և թիւրամիտ անդամներ հասարակութեան: Մեր ժամանակը դեռ ևս մանուկ—ծերունիների շրջանին է պատկանում, ուր հիւանդոտ, գունատ, կարճատես, կորամէջ եւն. աշակերտ պատանի ծերունիները՝ առանձին շնորհների տէր անձինք են համարւում: Այս մի մեծ և սոսկալի չարիք է, որի առաջը միայն կառնուի դպրոցական վարչութիւններն մի բժիշկ անդամով լրացնելով:

Ն. Ք.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Պարսից շահի գանձարանը. — Յայտնի է որ Պարսկաստանում պետական գանձարան չը կայ, երկրի բոլոր հարստութիւնը շահինն է. այս է պատճառը, որ Նասր-էդ-Դին հանգուցեալ շահն իր յաջորդի համար ահագին գանձ է թողել: Թէհրանում շահի պալատի ներքնայարկը գանձարան է, որի դռների առաջ գիշեր ցերեկ պահապաններ են հսկում: Այդ գանձարանում ամփոփուած են հարիւրաւոր միլիոնների ոսկի եւ արծաթի դրամներ, այլ եւ մեծ քանակութեամբ ձոյլ ոսկի եւ արծաթ: Բացի ազնիւ մետաղներից շահի գանձարանն հարուստ է թանկագին ակնեղէնով՝ շողակներով, ադամանդով, մարգարտով, յակինթով եւ զմրուխտով: Այլ թանկագին իրերի հետ այդ գանձարանում գտնւում է մի ոսկէ երկրագունդ 60 հարիւրամէտր տրամագծով. այս երկրագունդը ծածկուած է ազնիւ քարերով: Հնդկաստանը ձեւացրած է հոյակապ ամետիս քարերով. Աֆրիկէն — յակինթով, Անգլիան շողակներով. ծովերը զմրուխտից են: Քաղաքների անունները գրուած են պարսկերէն:

Նոյն գանձարանի զարդերից մէկն է եւ շահի գահը, որ ձոյլ ոսկուց է եւ քարերով ընդելուզած: Գահի բարձերն ու նրա առաջևի գորգն եւս ակնեղէնով ընդելուզեալ են: Գանձատան մէջ են պահպանւում նաև զէնքերի հարուստ ժողովածուն եւ արքայական զգեստը՝ երկար խալաթ, թանկագին քարերով զարդարած:

Երկնքի լուսանկարը. — 1887 թուականից սկսած Փարիզի աստղաբաշխական դիտարանում աշխատում են աստղազարդ երկնքի լուսանկարն հանելու վրայ, որին օգնում են այլ երկրների աստղաբաշխական դիտարանները: Այս հսկայական գործի մեծ մասն արդէն կատարուած է եւ նորերս ստացուած նիւթերը քննելու համար մի շաբաթ շարունակ աշխատում էին Փարիզում 15 օտար եւ 9 ֆրանսիացի աստղաբաշխներ: Մինչ 2300 տարի առաջ յայտնի էին միայն 1022 աստղեր, այժմ ճանաչում ենք միլիոնից աւելի: Այժմ ձեռնարկուած է երկու մեծ քարտէզների պատրաստութեան, որոնցից առաջինը պիտի բովանդակէ երկու եւ կէս միլիոն աստղ, իսկ երկրորդը — 30 միլիոն: Տասն եւ ութ աստղաբաշխական կայարաններ տասն տարի է ահա աշխատում են լուսանկարելու աստղազարդ երկինքը:

Կենդանիների պաշտպանութիւնն Անգլիայում. Անգլիայում կայ կենդանիների պաշտպանութեան մի ընկերութիւն, որի նպատակն է տարածել այն գիտակցութիւնը, թէ մարդիկ պարտական են կենդանիների հետ բարեկամաբար վարուելու: Այս ընկերութիւնը նորերս մի պատգամաւորութիւն է ուղարկել լուսաւորութեան պաշտօնէի մօտ խնդրելու, որ տէրութիւնից նպաստ ստացող բոլոր դպրոցներում մանուկներին ծանօթացնեն ընտանի կենդանիների սովորութիւնների եւ կարիքների հետ, որպէս զի հետզհետէ վերանայ կենդանիների հետ խստասրտութեամբ վարուելը:

Զուիցերիոյ դպրոցական կեանքը: Զուիցերիոյ ներքին գործոց պաշտօնէութեան յանձնարարութեամբ Չիկագոյի աշխարհահանդէսի համար Դոկտոր Օ. Հունցիկէրը մի տեղեկագիր էր պատրաստել, ուր համառօտ եւ ամփոփ կերպիւ նկարագրած է Զուիցերիայի դպրոցական վիճակը հնումն ու այժմ: Միջին դարերում Զուիցերիայում դպրոցները միայն վանական էին (Ռայխէնաու, Սբ. Գալլեն, Ս. Մորից, Քուր, Մենստէր), ապա քաղաքային, որոնց մէջ ողորմելի „գրել ուսուցանող դպրոցներ" միայն կային. Հումանիստների շնորհիւ եւ տպագրութեան գիւտի պատճառաւ, այլ եւ կրօնական յեղափոխութեան ազդեցութեամբ բարգաւաճեցին դպրոցներն. մինչեւ 18 դարու կէսը դպրոցական վիճակն անկեալ էր, ապա ծաղկեց եւ սկսած 1848 թուականից մինչեւ մեր օրերը մեծամեծ քայլեր արաւ դէպի յառաջ: Բացի ժողովրդական, միջին եւ մասնագիտական դպրոցներից Զուիցերիան այժմ 8 բարձրագոյն դպրոց ունի, մինչ առաջ միայն մի հատ ունէր:

Գերմանական համալսարանների ուսանողների թիւը: Այս ամառուայն կիսամեակին Բեռլինի համալսարանում ուսանում էին 4649 ուսանող: 376 հոգի ուսանում են աստուածաբանութիւն, 1596 իրաւաբանութիւն, 1118 բժշկութիւն եւ 1759 հոգի փիլիսոփայութիւն: Բեռլինի համալսարանն ունի բացի դրանից 255 ազատ ունկնդիրներ, որոնցից 35 կանայք են: Բեռլինի այլ բարձրագոյն դպրոցներում, զինուորական բժշկական ճեմարանում, արուեստագիտական բարձրագոյն դպրոցում, հանքաբանական ճեմարանում եւն ուսանում են 3664 հոգի, ընդամէնն ուրեմն Բեռլինում բարձրագոյն կրթութիւն են ստանում 8546 անձն: Օտարների թիւը Բեռլինի բարձրագոյն դպրոցներում 675 է:

Միւնխէնի համալսարանն ունի 3777 ուսանող, որոնցից 141 աստուածաբան, 1121 իրաւաբան, 150 հոգի հասարակական գիտութիւններ ուսանող, 1259 բժիշկ, 42 ատամնաբոյժ, 865 փիլիսոփայ, 231 դեղագործ են: Օտար ուսանողների թիւն է 267: *Լայպցիգի* համալսարանն ունի 2876 ուսանող, 355 աստուածաբան, 920 իրաւաբան, 622 բժիշկ, 56 ատամնաբոյժ, 965 փիլիսոփայ. օտար ուսանողների թիւն է 268: *Բոննի* համալսարանն ունի 1863 ուսանող: *Բրեսլաւի* համալսարանում կան 1425 ուսանող (25 օտար): *Հալլէում* 1515 (128 օտար): *Ֆրայբուրգում* 1579 (102 օտար): *Վիւրցբուրգում* 1339 (55 օտար): *Տիւբինգէնում* 1172 (25 օտար): *Հայդելբերգում* 1164 (187 օտար): *Էրլանգէնում* 1138 (56 օտար): *Գէօտտինգէնում* 1307 (97 օտար): *Մարբուրգում* 965 (55 օտար): *Գրայֆսվալդ* 948 (55 օտար): *Ստրասբուրգ* 938 (80 օտար): *Ենա* 761 (91 օտար): *Կիլ* 708 (19 օտար): *Կէօնիգսբերգ* 700 (45 օտար): *Գիսսէն* 650 (11 օտար): *Ռոստոկ* 500 (10)

օտար)։ Մ ի ն ս տ է ր ի ճեմարանում 448 ուսանող կայ (8 օտար)։ Գերմանական 21 համալսարաններում այս ամառ ուսանում են 29,802 հոգի, որոնցից բուն գերմանացի են 27,613 հոգի, իսկ 2,189 հոգի օտար երկրացիք։ Անցած ձմեռային կիսամեակի համեմատութեամբ բոլոր ուսանողների թիւն աւելացել է 685 ուսանող։

Տ զ ր ո ւ կ ի պ ա տ ճ ա ռ ա ծ վ ն ա ս ը. — Պրոֆեսոր Պաշինուտի արդէն վեց տարի սրանից առաջ բժշկութեան մէջ գործ ածուող տզրուկները քննելու ժամանակ 35 հատից երկուսի մէջ գտաւ Նիկոլաէրի եւ Ռօզէնբախի յայտնի բացիլը եւ առհասարակ եկաւ այն համոզման, որ տզրուկների միջոցաւ հեշտ կերպով կարելի է վարակիչ հիւանդութիւններ պատուաստել։ Իւր այդ հայեացքը եւ հետազօտութիւնների հետեւանքը հեղինակը արծարծեց մի ընդարձակ յօդուածում 1890 թուին։ Այժմ Պաշինուտին նորերումս իրան պատահած մի դէպքի մասին հաղորդում է, թէ ինչպէս մի հիւանդ տզրուկի կպցնելուց յետոյ վարակուեց մահացու ջրգողութեամբ եւ արեան վարակմամբ։ 18 ժամ մահից յետոյ դիակը ենթարկուեց քննութեան. սրտի եւ միւս գործարանների արեան մէջ գտնուեցին մահաբեր ջրգողութեան բացիլները, այդ գիւտը հաստատուեց պատուաստելով անասուններին եւ հիւանդացնելով նրանց մի եւ նոյն հիւանդութիւնով։

ԱԶԳԱՅԻՆ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ ՅԵՏԱՁԳՈՒՄՆ.

Շատ յարգելի պատճառներ ստիպում են Ազգիս Վեհափառ Հայրապետին յետաձգել Ս. Միւռոնի օրհնութիւնը, որ նշանակուած էր կատարելու առաջիկայ սեպտեմբերի 29-ին.

Մի այսպիսի անսպասելի և անսովոր յետաձգման որոշումն անշուշտ իւր ծանրակշիռ պատճառներն ունի. ուստի և յուսով ենք, որ մեր ազգայինք կյարգեն իւրեանց Սիրեցեալ Հայրիկի այս նոր կարգադրութեան յայտարարութիւնը և աներկբայելի յուսով կսպասեն մօտ ապագայում արժանանալու այդ շնորհաբաշխութեան հանդիսին, որ պիտի կատարուի Տեառն յաջողութեամբ աւելի յարմար ժամանակ, երբ նաև Մայր Տաճարի ներքին նորոգութիւնը աւարտած և բազմաթիւ բարեպաշտ ուխտաւորաց ընդունելութեան համար ձեռնարկած պատրաստութիւնները վերջացած կլինին.

Վեհափառ Հայրապետը Օգոստոսի 26-ին հաճեցաւ իջնել Բիւրական ամարանոցից Ս. Էջմիածին, ուր բազմաթիւ եկեղեցական վարչական և դպրոցական խնդիրներ Նորին Օծութիւնն անձամբ սկսաւ կարգադրել.

Ներքին գործոց Նախարարութիւնից յայտնուած է Նորին Վեհափառութեան, որ Պետերբուրգից Մայր—Աթոռս պիտի ժամանէ օտար դաւանութեանց վարչութեան տեսուչ պ. Մասալովն իրեն օգնական ունենալով «Պետերբուրգսկի վէդոմոստի» խմբագիր իշխան Ուխտոմսկուն, որոնք պիտի դիտեն մեր դպրոցական հաստատութիւններից մի քանիսը.

Գ. ՃԵՄԱՐԱՆ.

Այս տարի Գ. ճեմարան մտնել ցանկացող աշակերտաց թիւը շատ մեծ էր, չը նայելով որ տեղի անձկութիւնն և Նախահաշուի որոշումները թոյլ չէին տալիս շատ աշակերտ ընդունելու, բայց Վեհափառ Հայրիկն Իւր յայտնի գթութեամբ հրամայեց չը մերժել պատրաստ և ուսումնատենչ պատանիներին. Շնորհիւ Վեհափառ կաթուղիկոսի այս հրամանի երրորդ դասարանին կից այլևս զուգընթաց դասարաններ պիտի բացուին, որի համար ընդունուած են արդէն իսկ 60 աշակերտ, սակայն նորեկ աշակերտների հոսանքը դեռ ևս չէ դադարել.

Դպրանոցներից շրջանաւարտ սաներ ևս խնդրամատոյց են եղել առաջին լսարան մտնելու, որոնցից առ այժմ ընդունուած են միայն 4 հոգի.

Նորին Օծութիւնը մտադիր է ճեմարանի լսարանի աշակերտները տեղափոխել տալ ս. Գայեանէի նոր շինութիւնն և այսու տեղ բանալ նորեկ աշակերտաց համար.

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռոյս տպարանն այսուհետև պիտի կատարէ ամենայն տեսակ տպագրական յանձնարարութիւններ, որովհետև տպագրուելիք բոլոր գրքերը պէտք է Կովկասեան գրաքննութեան հաւանութիւն ստացած լինեն. Տպագրական յանձնարարութիւններ ունեցողներին առաջարկում ենք դիմել տպարանական մասնաժողովին.

Տպարանն ունի այժմ յատուկ կազմատուն և